ԴՈՒՈ ԷՔՍՏՐԱ ԵՎ ՏՐԻՈ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. «Դուո» ծառայությունների փաթեթին պայմաններ

«Դուո»-ն ծառայությունների փաթեթ է, որի կազմում ներառված է երկու Ծառայություն՝ «Լայնաշերտ ինտերնետ» և «Սմարթ հեռուստատեսություն»:

Աղյուսակ 1. «Դուո» ծառայությունների փաթեթի գնացուցակ

Ծառայությունների փաթեթ Դուո Էքստրա			
Ծառայությունների փաթեթ Դուո	Էքստրա	Էկոնոմ	Կոմֆորտ
Ինտերնետի արագություն անժամկետ բաժանորդագրության դեպքում	35 Մբ/վ	15 Մբ/վ	35 Մբ/վ
Ներառված հեռուստաալիքների քանակ անժամկետ բաժանորդագրության դեպքում[1]	առնվազն 54	առնվազն 60	առնվազն 52
Մուլտիրում	հասանելի[2]	հասանելի[3]	հասանելի[4]
Մուլտիրում ծառայության Հավելյալ սմարթ սարք	հասանելի	հասանելի	հասանելի
SmartBox Wi-Fi	հասանելի	հասանելի	հասանելի
Եթերի տեսագրում (NPVR)	հասանելի	հասանելի	հասանելի
Նախկին հաղորդումներ (TV on Demand) ծառայության տևողություն	7 օր	7 օր	7 օր
Հավելյալ արագություն	անհասանելի[5]	անհասանելի[6]	հասանելի
Առանձին հեռուստաալիքներ	հասանելի	հասանելի	հասանելի
Թեմատիկ փաթեթներ	հասանելի	հասանելի	հասանելի
Ամսավճար	**6500 դրամ**	**7500 դրամ**	**8500 դրամ**

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

Wi-Fi Սարքի (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) օգտագործման իրավունքը ներառվում է **«Դուո» ծառայությունների** փաթեթում (Wi-Fi Սարքը (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) տրամադրվում է առանց տարեկան բաժանորդագրության պայմանի և առանց լրացուցիչ վճարի գանձման): Օպերատորի և Բաժանորդի միջև Պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում Wi-Fi Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

1.1. Բաժանորդագրվելով **«Դուո»** ծառայությունների փաթեթին 1 տարով Բաժանորդը պարտավորվում է Ծառայության ակտիվացման օրվանից 1 տարի (365 օր) շարունակ օգտվել Ծառայություններից:

---

[1] «Դուո» ծառայությունների փաթեթի ալիքները հաստատուն չեն և կարող են փոփոխվել Օպերատորի կողմից ցանկացած պահի:

[2] Եթե որևէ հավելյալ ծառայություն հասանելի է, ապա հնարավոր է ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում՝ վճարելով սահմանված ամսավճարը:

[3] Եթե որևէ հավելյալ ծառայություն հասանելի է, ապա հնարավոր է ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում՝ վճարելով սահմանված ամսավճարը:

[4] Եթե որևէ հավելյալ ծառայություն հասանելի է, ապա հնարավոր է ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում՝ վճարելով սահմանված ամսավճարը:

[5] Եթե որևէ հավելյալ ծառայություն անհասանելի է, ապա հնարավոր չէ ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում:

[6] Եթե որևէ հավելյալ ծառայություն անհասանելի է, ապա հնարավոր չէ ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում:

Մեկ տարով բաժանորդագրության դեպքում Բաժանորդը ստանում է հետևյալ առավելությունները՝

i. Հիմնական ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 ամիս շարունակ 100 տոկոսով զեղչվում է տվյալ սակագնային փաթեթի ամսավճարը, այսինքն՝ տվյալ սակագնային փաթեթով սահմանված հիմնական Ծառայություններն առաջին ամսվա ընթացքում են առանց լրացուցիչ վճարի գանձման,[7]

ii. Բաժանորդը ստանում է իր սակագնային փաթեթի պայմաններով սահմանված ինտերնետի հիմնական արագության համեմատ եռակի ավելի բարձր արագություն[8] պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 (մեկ) տարի (365 օր) շարունակ,

iii. «Դուո Էքստրա» և «Դուո Կոմֆորտ» սակագնային փաթեթներում ներառվում են «Հավելյալ 10» և «Ժամանց 10» հեռուստաալիքների փաթեթները, իսկ «Դուո Էկոնոմ» սակագնային փաթեթում ներառվում է «Հավելյալ 10» հեռուստաալիքների փաթեթը՝ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1(մեկ) տարի (365 օր) շարունակ:

1.2. **«Դուո» ծառայությունների փաթեթին** բաժանորդագրության դեպքում պայմաններով սահմանված կարգով Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման կամ վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում Ծառայություններից օգտվելու պարտադիր ժամկետը երկարում է Ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ, սակայն չի երկարում սույն պայմանների 1.1. կետով սահմանված առավելությունների տրամադրման ժամկետը:

1.3. Գործող Բաժանորդը, պարտադիր տարեկան բաժանորդագրության պայմանով միանալով **«Դուո» ծառայությունների փաթեթին** կամ վերակնքելով գործող տարեկան բաժանորդագրությամբ պայմանագիրը **«Դուո» ծառայությունների փաթեթի** շրջանակում, ստանում է սույն պայմանների կետ 1.1. ii., iii. ենթակետերով տրամադրվող առավելությունները:

2. Սակագնային փաթեթի փոփոխություն

Եթե Բաժանորդը Ծառայությունների՝ 100% զեղչով տրամադրման ժամանակահատվածում կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Դուո» կամ «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի կամ «Մոնո Էքստրա» սակագնային փաթեթի որևէ սակագնի կամ «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնի ապա շարունակում է օգտվել 100% զեղչից նոր սակագնային փաթեթով տրամադրվող Ծառայությունների շրջանակում մինչև դրանց 100% զեղչով տրամադրման համար ի սկզբանե սահմանված ժամանակահատվածի ավարտը՝ եթե նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է: Սույն կետում նշված ժամանակահատվածում «Սմարթ» կամ «Ֆիքսլայն» Ծառայությունների/սակագնային փաթեթներին անցման դեպքում Բաժանորդը դադարում է Ծառայություններից օգտվել 100% զեղչով:

Եթե Բաժանորդը սույն պայմանների 1.1. կետի ii ենթակետում նշված կարգով ստացել է ինտերնետի եռակի արագացում և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Դուո» կամ «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի կամ «Մոնո Էքստրա» սակագնային փաթեթի որևէ սակագնի կամ «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնի, ապա շարունակում է օգտվել ինտերնետի եռակի արագությունից մինչև դրա համար նախկին սակագնային փաթեթով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր

---

7 Սույն կետի իմաստով անվճար ամիս է համարվում ծառայությունների ակտիվացման օրվանից սկսած մինչև հաջորդող ամսվա նույն օրը ընկած ժամանակահատվածը: Սույն կետով սահմանված պայմանը գործում է բացառապես նոր բաժանորդների համար: Բաժանորդը ստանում է 100% (մեկ հարյուր) զեղչ առաջին 2 (երկու) ամսվա ամսավճարի համար (բացառությամբ «Դուո Էքստրա 6500» սակագնային փաթեթի), այսինքն՝ տվյալ սակագնային փաթեթով նախատեսված հիմնական Ծառայություններն առաջին 2 (երկու) ամսվա ընթացքում տրամադրվում են առանց լրացուցիչ վճարի գանձման: Սույն պայմանը տրամադրվում է բացառապես այն դեպքում, եթե վաճառքը կատարվում է Ակտիվ վաճառքի աշխատակցի կողմից, մնացած բոլոր ուղղություններով վաճառք կատարելիս սույն կետով սահմանված 2 (երկու) ամիս անվճար պայմանը չի տրամադրվում:

8 Բաժանորդի ինտերնետի արագությունը չի կարող լինել ավելի, քան 200 (երկու հարյուր) Մբ/վ:

սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է, և անցումը կատարվում է մինչև ինտերնետի եռապատկված արագության գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում սույն պայմանների 1.1. կետի ii ենթակետով տրամադրված ինտերնետի եռապատիկ արագության պայմանը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում:

2.1. Եթե Բաժանորդը սույն պայմանների 1.1. կետի iii. ենթակետում նշված կարգով ստացել է «Հավելյալ 10» և «Ժամանց 10» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթը և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Դուո» կամ «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի, ապա շարունակում է օգտվել «Հավելյալ 10» և «Ժամանց 10» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթից մինչև դրա համար նախկին սակագնային փաթեթով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է, և անցումը կատարվում է մինչև «Հավելյալ 10» և «Ժամանց 10» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթների տրամադրման գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում սույն պայմանների 1.1. կետի iii. ենթակետով տրամադրված «Հավելյալ 10» և «Ժամանց 10» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթների տրամադրման պայմանը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում**:**

2.2. **«Դուո» ծառայությունների փաթեթ** բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդն օգտվել է մատուցված Ծառայություններից դրանց ակտիվացման օրվանից սկսած առնվազն 365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրվա ընթացքում:

Եթե Բաժանորդը բաժանորդագրվել է «Դուո» ծառայություններիփաթեթին մեկ տարով և Բաժանորդային պայմանագրի գործողությունը դադարեցվում է՝ Բաժանորդի գործողությամբ կամ անգործությամբ պայմանավորված մինչև սահմանված պարտադիր ժամկետի ավարտը, ապա Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ վճարել ընթացիկ պարտքը և տուգանք 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով: Ֆիզիկական անձանց համար- Բաժանորդի կողմից Բաժանորդային պայմանագրից միակողմանի հրաժարման դեպքում Օպերատորի կողմից Բաժանորդային պայմանագրի լուծում կատարվում է բացառապես Բաժանորդի կողմից մինչև Բաժանորդային պայմանագրի լուծման (դադարեցման) օրը իրեն մատուցված Ծառայությունների արժեքի, ներառյալ ամսական բաժանորդային վճարի, ինչպես նաև Բաժանորդային պայմանագրի միակողմանի լուծման համար Օպերատորի կողմից նախատեսված այլ վճարումների (տույժերը, տուգանքները, հրաժարագին), եթե այդպիսիք առկա են, իրականացման դեպքում:

3. «Տրիո» ծառայությունների փաթեթի պայմաններ

«Տրիո»-ն ծառայությունների փաթեթ է, որի կազմում ներառված է երեք ծառայություն՝ «Լայնաշերտ ինտերնետ», «Սմարթ հեռուստատեսություն» և «Ֆիքսված հեռախոսակապ»[9]:

Աղյուսակ 5. «Տրիո» ծառայությունների փաթեթի գնացուցակ

Ծառայությունների փաթեթ Տրիո[10]	Մարզային[11]	Ստարտ	Կոմֆորտ	Պրեմիում
Ինտերնետի արագություն	20 Մբ/վ	50 Մբ/վ	75 Մբ/վ	100 Մբ/վ

[9] «Տրիո Ստարտ», «Տրիո Կոմֆորտ» և «Տրիո Պրեմիում» սակագնային փաթեթներով սահմանված հեռախոսակապի ծառայության պայմանները (տվյալ փաթեթների համար սահմանված ելքային զանգերի սակագները և «Տրիո Ստարտ», «Տրիո Կոմֆորտ» և «Տրիո Պրեմիում» փաթեթներով չսահմանված պայմանները) համընկնում են «Ֆիքսլայն Կոմֆորտ» սակագնային փաթեթի պայմանների հետ:

[10] «Տրիո» ծառայությունների փաթեթի ալիքները հաստատուն չեն և կարող են փոփոխվել Օպերատորի կողմից ցանկացած պահի:

[11] «Տրիո Մարզային» սակագնային փաթեթի պայմանները չեն գործում Երևան քաղաքում:

Ներառված հեռուստաալիքների քանակ[12]	առնվազն 50	առնվազն 50	առնվազն 100	առնվազն 155
Անվճար րոպեներ ցանցի ներսում	0	500	500	700
Անվճար րոպեներ դեպի տեղական այլ ֆիսված ցանցեր	0	200	200	300
Մուլտիրում	հասանելի[13]	հասանելի	ներառված[14]	ներառված
Մուլտիրում ծառայության Հավելյալ սմարթ սարք	հասանելի	հասանելի	հասանելի	ներառված մինչև 2 սարքավորում
SmartBox Wi-Fi	հասանելի	հասանելի	ներառված՝ SmartBox Wi-Fi 1,	ներառված՝ SmartBox Wi-Fi 1, SmartBox Wi-Fi 2, SmartBox Wi-Fi 3
Եթերի տեսագրում (NPVR)	հասանելի	հասանելի	ներառված	ներառված
Նախկին հաղորդումներ (TV o Demand) ծառայության տևողություն	7 օր	7 օր	7 օր	7 օր
Հավելյալ արագություն	անհասանելի	անհասանելի	անհասանելի	հասանելի
Առանձին հեռուստաալիքներ	հասանելի	հասանելի	հասանելի	հասանելի
Թեմատիկ փաթեթնե	հասանելի	հասանելի	հասանելի	հասանելի
Ամսավճար	**8500 դրամ**	**10000 դրամ**	**12500 դրամ**	**20000 դրամ**

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

Wi-Fi Սարքի (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) օգտագործման իրավունքը ներառվում է **«Տրիո» ծառայությունների** փաթեթում (Wi-Fi Սարքը (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) տրամադրվում է առանց տարեկան բաժանորդագրության պայմանի և առանց լրացուցիչ վճարի գանձման): Օպերատորի և Բաժանորդի միջև Պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում Wi-Fi Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

3.1. «Տրիո» ծառայությունների փաթեթը բաղկացած է «Տրիո Մարզային», «Տրիո Ստարտ», «Տրիո Կոմֆորտ», «Տրիո Պրեմիում» սակագնային փաթեթներից:
Բաժանորդագրվելով «Տրիո» ծառայությունների փաթեթին 1 (մեկ) տարով՝ Բաժանորդը պարտավորվում է Ծառայության ակտիվացման օրվանից 1 տարի (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր) շարունակ օգտվել «Տրիո» ծառայությունների փաթեթից:
Մեկ տարով բաժանորդագրության դեպքում Բաժանորդը ստանում է հետյալ առավելություններ՝

3.1.1. Հիմնական ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 (մեկ) ամիս շարունակ 100 (մեկ հարյուր) տոկոսով զեղչվում է տվյալ սակագնային փաթեթի ամսավճարը, այսինքն՝ տվյալ

[12] «Տրիո Ստարտ» սակագնային փաթեթում ներառված հեռուստաալիքների ցանկը համընկնում է «Սմարթ Ստարտ» սակագնային փաթեթում ներառված հեռուստաալիքների ցանկի հետ:
[13] Եթե որևէ հավելյալ ծառայություն հասանելի է, ապա հնարավոր է ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում՝ վճարելով սահմանված ամսավճարը:
[14] Եթե որևէ հավելյալ ծառայություն ներառված է, ապա տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում տվյալ հավելյալ ծառայության համար չի գանձվում սահմանված ամսավճարը:

սակագնային փաթեթով սահմանված հիմնական Ծառայություններն առաջին ամսվա ընթացքում տրամադրվում են 100 տոկոս զեղչով ,

3.1.2. Բաժանորդը ստանում է իր սակագնային փաթեթի պայմաններով սահմանված ինտերնետի հիմնական արագության համեմատ եռակի ավելի բարձր արագություն՝ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 (մեկ) տարի (365 օր) շարունակ (եթե Բաժանորդը օգտվում է «Հավելյալ արագություն» ծառայությունից, ապա եռապատկվում է «Տրիո» ծառայությունների փաթեթի հիմնական պայմաններով սահմանված ինտերնետի արագությունը, իսկ արդեն իսկ ակտիվացված «Հավելյալ արագություն» ծառայության շրջանակներում տրամադրվող արագությունը գումարվում է «Տրիո» ծառայությունների փաթեթի շրջանակներում եռապատկված արագությանը)[15]:

3.1.3. Սակագնային փաթեթում ներառվում է «Հատուկ 30» հեռուստաալիքների փաթեթը՝ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1(մեկ) տարի (365 օր) շարունակ:

3.2. «Տրիո» ծառայությունների փաթեթին բաժանորդագրության դեպքում պայմաններով սահմանված կարգով Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման կամ վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում սակագնային փաթեթին բաժանորդագրության ժամկետը երկարում է Ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ, սակայն չի երկարում սույն պայմանների 3.1. կետում սահմանված առավելությունների տրամադրման ժամկետը:

3.3. Եթե Բաժանորդը սույն պայմանների 3.1.2. կետում նշված կարգով ստացել է ինտերնետի եռակի արագացում և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Տրիո» ծառայությունների փաթեթի մեկ այլ սակագնային փաթեթի, «Դուո Կոմֆորտ» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի կամ «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնի, ապա շարունակում է օգտվել ինտերնետի եռակի արագությունից մինչև դրա համար նախկին սակագնային փաթեթով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է, և անցումը կատարվում է մինչև ինտերնետի եռապատկված արագության գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում սույն պայմանների 3.1.2. կետով տրամադրված եռակի արագացումը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում:

3.4. Եթե Բաժանորդը սույն պայմանների 3.1.3. կետում նշված կարգով ստացել է «Հատուկ 30» հեռուստաալիքների փաթեթ և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Տրիո» կամ «Դուո» ծառայությունների փաթեթների մեկ այլ սակագնային փաթեթի ապա շարունակում է օգտվել «Հատուկ 30» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթից մինչև դրա համար նախկին սակագնային փաթեթով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է, և անցումը կատարվում է մինչև «Հատուկ 30» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթի տրամադրման գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում սույն պայմանների 3.1.3. կետով տրամադրված «Հատուկ 30» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում:

3.5. Գործող Բաժանորդը, պարտադիր տարեկան բաժանորդագրության պայմանով միանալով «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի կամ վերակնքելով գործող տարեկան բաժանորդագրությամբ պայմանագիրը «Տրիո» ծառայությունների փաթեթի շրջանակում ստանում է սույն պայմանների 3.1. կետով տրամադրվող առավելությունները բացառությամբ 3.1.1. ենթակետով սահմանված առավելության:

3.6. «Տրիո» ծառայությունների փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդն օգտվել է մատուցված Ծառայություններից դրանց ակտիվացման օրվանից սկսած առնվազն 365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրվա ընթացքում:

3.7. Եթե «Տրիո» ծառայությունների փաթեթին բաժանորդագրությունը դադարեցվում է Բաժանորդի դիմումի հիմա վրա կամ Օպերատորի նախաձեռնությամբ՝ Բաժանորդի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման հիմքով, մինչև սահմանված պարտադիր ժամկետի ավարտը, ապա Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ վճարել ընթացիկ պարտքը և տուգանք 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով: աժանորդի կողմից Բաժանորդային պայմանագրից

[15] Բաժանորդի ինտերնետի արագությունը չի կարող լինել ավելի, քան 200 Մբ/վ:

միակողմանի հրաժարման դեպքում Օպերատորի կողմից Բաժանորդային պայմանագրի լուծում կատարվում է բացառապես Բաժանորդի կողմից մինչև Բաժանորդային պայմանագրի լուծման (դադարեցման) օրը իրեն մատուցված Ծառայությունների արժեքի, ներառյալ ամսական բաժանորդային վճարի, ինչպես նաև Բաժանորդային պայմանագրի միակողմանի լուծման համար Օպերատորի կողմից նախատեսված այլ վճարումների (տույժերը, տուգանքները, հրաժարագին), եթե այդպիսիք առկա են, իրականացման դեպքում: